№ 62—ՔՍԱՆ ԵՒ ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿԻՒՐԱԿԷ, 12 ՕԳՈՍՏՈՍԻ 1884

ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Տարեկան գինն է 10 ռուբլի։
Վեց ամսուանը՝ 5 ռ., երեք ամսուանը՝ 3 ռ., ամիսը 1 ռ.։
Առանձին համարներով իւրաքանչիւրը 5 կոպէկ։

Խմբագրատունը բաց է ամեն օր բացի կիւրակէ եւ տօն օրերից առաւօտեան 11—2 ժամը կէսօրից յետոյ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի խմբագրութեան հետեւեալ հասցէով.— Въ red. газеты «Меру Айастани», въ Тифлисъ, или Redaction de «Meghou Haïastani», à Tiflis. (Caucase).

Խմբագրութեանս ուղղած թէ յօդուածները եւ թէ նամակները պէտք է պարզ գրուած լինին դրողի ստորագրութեամբ եւ հասցէով։ Խմբագրութիւնը կարող է փոփոխել, ուղղել եւ կրճատել յօդուածները։ Խմբագրութիւնը իւր վերայ չէ առնում յետ ուղարկել յօդուածները եւ պահում է երկու ամիս մինչեւ ցպահանջ։

Ցայտարարութիւնների համար վճարում են ամեն մի բառին 2 կոպ։ Ցայտարարութիւններ ընդունվում են հայերէն եւ օտար լեզուներով։ Ցայտարարութիւններ ընդունվում են խմբագրատանը, «Կովկասեան հիւրանոցի տակ պ. Տէր-Յովսէփեանի ծխախոտի խանութում եւ պ. Շահվերդեանի պավիլիօնում։

«ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ԼՐԱԳՐԻՆ կարելի է յուլիսի 1-ից ստորագրվել

ԿԻՍԱՄԵԱՅ ԺԱՄԱՆԱԿՈՎ

ԿԷՍ ՏԱՐՈՒԱՅ ԳԻՆՆԷ 5 ՌՈՒԲԼԻ։

Ստորագրվել կարելի է Խմբագրատանն եւ պ. Շահվերդովի լրագրական գործակալութեան դրասենեակում։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ։

«Վարժարանի» դատարման լուրը։ — Զայն բարբառոյ յանապատի։
Ներքին Տեսութիւն. — Գիւղեր եւ հնութիւնք.
Մանր լուրեր։
Ցայտարարութիւններ։
Բանասիրական. — Գինեղեն։

ԹԻՖԼԻՍ, 12 ՕԳՈՍՏՈՍԻ 1884 Թ.

—

«ՎԱՐԺԱՐԱՆԻ» ԴԱՏԱՐՄԱՆ ԼՈՒՐԸ։

III

Անկիրթ եւ կիսակիրթ հասարակութիւնը, որա այս ու այն դասակարգը զկպի լուսաւորութիւնը մըղոլը միշտ եւ հանապազ հասարակութեան կամ նրա առանձին դասակարգերի ներկայացուցիչներն ու գլխաւորն են եղել։ Ռուսիան, որոյ հպատակներն ենք հայքս, մինչ օրս այդ ճանապարհովն է առաջ ընթացել։ Ամեն օր տեսնում ենք, որ առանց տերութեան, առանց սրա այս ու այն պաշտօնական մարմնոյ նախաձեռնութեանը, յորդորմանը, կամ հրամանին, գրեթէ, ո՛չ. մի գործ չէ սկսվում Ռուսիայում։ Այստեղ լուսաւորութիւնը միշտ գլխից, վերից է սկսվում եւ ապա, կամաց կամաց, տարածվում ժողովրդի մէջ։ Բացի այն, որ հայ ժողովուրդը ինքնաբերաբար մի բան անելու անընդունակ է եւ անձեռնհաս, մի եւ նոյն ժամանակ, նա չի՛ էլ կարող շեղուիլ այն ընդհանուր կանոնից, որով առաջ է գնում իրան տիրապետող ազգը—ռուսը։ Ուզում եմ ասել թէ՝ հայքը, ուզենք չ'ուզենք, պէտք է որ հետեւենք մեզ տիրապետող ազգին, այսինքն լուսաւորութիւնը մեր մէջ էս պէտք է սկսուի եւ տարածուի մեր ներկայացուցիչների, մեր գլխաւորների ձեռքով։ Նրանց անմիջական թելադրութեամբ։

Անցեալ անդամներում մենք տեսանք, որ հայ ուսուցիչը, տեսուչը, եւ դպրոցը՝ չե՛ն ուզում գլխի մի՛ մանկավարժական թերթի գոյութիւնը ապահովել։ Որովհետեւ այդպիսի թերթի կարեւորութիւնը նրանք, խօսքը ասելով, չեն ըմբռնել։ Ուրեմն՝ հարկաւոր է նրանց թելադրող, առաջնորդող եւ, ի հարկին, նա եւ—հրամայող։ Այդպիսի մարմիններ մեզանում կան։ Խօսքս թեմական վերատեսուչների մասին է։ Ինչպէս ցաւալի փորձը ցոյց է տալիս՝ մեր պպ. թեմ. վերատեսուչները, առանց բացառութեան, այդ կէտումը, ոչնչով առաջ չեն գնացել, իրանց ստորադրեալ, իրանցից լոյս ու բարոյական յառաջադիմութիւն սպասող ուսուցիչ, տեսուչ եւ ուսումնարաններից։ Դէպի մանկավարժական թերթերը եղած աններելի անտարբերութիւնը, ասե՞նք արդեօք եւ անհասկացողութիւնը, մեր մէջ ընդհանուր է։ Հայ դպրոցական գործիչները, ոքից ցըգրըւիս, իրանց տեղերումը չեն իսկապէս։ Փատը կենդանի է եւ յայտնաբարբառ։

Զո՞րս հարիւր դպրոց, ի՞նը հարիւր ուսուցիչ, վեց հատ թեմ. վերատեսչութիւն, եւ ի վերայ այսր ամենայնի սամենալաւ հայ մանկավարժական թերթը—«Վարժարանը» մի՛միայն 50 բաժանորդ ունի դպրոցի գործիչներից։

— Ջ'ներկաբաներնը։ Հայի բարոյական յառաջադիմութեան առաջնակարգ այս հիւանդ մարմնոյ—դըպրոցի— խոցերին ձեռք չը տանք աւելի։ Բայց վերջապէս պէ՞տք է մի բան անել թէ ոչ։

Մեր կարծիքով ահա ինչ. Ա) թող մեր թեմ. պպ. վերատեսուչները «Վարժարանին» ստորագրուելը ամեն մի հայ դպրոցի եւ տեսչի համար պարտադիր անեն։ Բ) թող նրանք անձամբ անձին, շրջաբերականով, տեսչաց եւ հոգաբարձուաց ձեռքով, յորդորեն, համոզեն իրանց ուսուցիչներին «Վարժարանի» (և առ հասարակ մանկավարժական թերթերի) ստանալուց եւ կարդալուց չը խոյս տալ, չ'արհամարհել այն, ինչ որ ուղղակի իրանց մասնագիտութեանն է վերաբերում, եւ ինչով որ իրանք մի աշտուճ հայ են ճարում։ Գ) թող պպ. թեմ. վերատեսուչները իրանք ևս մասնակցեն, օգնեն «Վարժարանի» աւելի լաւանալուն, նրան աւելի հետաքրքիր դառնալուն։

— Ինչո՞վ.

— Լուրեր, տեղեկութիւններ, փոփոխութիւններ, նկարագրութիւններ, մանաւանդ հաշիւներ և առ հասարակ, իրանց ամեն մի կարգադրութիւնը, ինչ որ իրանք հարկաւոր են համարում հրապարակ անել թէ՛ հայ հասարակութիւնը դրանց հետ ծանօթացնելու համար, թէ լրագրութեան կարծիքը լսելու համար, և թէ՛, վերջապէս, գիտութեանը և վիճակագրութեանը ծառայութիւն մատուցանելու համար։

Բայց այս խորհրդի օգուտը մեկ դրանումը չէ։ Այլ նա օգտակար է նա և իրանց թեմ. վերատես-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԻՆԵԳԵՒ.

(ԶՈՐՍ ՕՐՈՒԱՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ)

ԽԴ.

Երեկոյ էր։ Զարանչին ու կնոջը եաքիցն եկած Թորոս աղան ուրախ էր, որ Մարանի հրաշագործութեանը ներկայ ու վկայ լինելու առիթ ունեցաւ.— «Հրաժարիմք ի սատանայէ և յամենայն խաբէութենէ նորա, ի չար խորհրդոց նորա, ի պատրանաց նորա, ի չար կամաց նորա և յամենայն խաբէութենէ նորա հրաժարելով հրաժարիմք»։

Մարանը մի կողմից այս աղօթքն էր ասում, միւս կողմից, տիկին Դշխուհանի աջակցութեամբ «գինեղեի մաջոնը» [1]) պատրաստում։ Կէս ժամից յետոյ դեղը արդէն պատրաստ էր։ Բայց մի ժամ ևս արաղի և քացախի մէջ թաթախուած պէտք է մնար մաջոնը մինչեւ կատարելապէս եփուիլը։ Ցնեցիք չը կամենան այդ ժամը ի զուր անցկացնել, ուստի ամենից առաջ Թորոս աղան դարձաւ դէպի Մարանը ասելով՝— «Ինձնից մի լաւ ջուրբացու քեզ ընծայ, Մարան, եթէ պատմես թէ այդ հոգեկորոյս դեւերը որտեղից մտել են խեղճ քենակալիս փորը և այն տեղ ինչ տեղատրուել։ «Աղջկադ օժիգցու բոլոր խաս կոտրները Մարան, ես իմ մնակիցս տամ»—աղաչում էր և Արէգնազանը։ «Արշակիս ուզարկեմ աղջկադ խաչը իրան սեղհական ձեռքերովը Թող բռնէ, խաչեղբայր լինի քեզ» Նարդոս խանումը աւելի բարձրից էր գալի։ Իրան հերթում տիկին Դշխուհին իւր ճակատի մեծ ոսկին ցոյց էր տալիս պառաւին։

Մարանը գայթագղեցաւ։ Առաջարկուած ընծաներից ու խոստումներից նորա աչքերը շլացան։ Նա մոռացաւ թէ մամի կոակը, և թէ իրան ուխտը և գինեղեի դաղտնիքը բացատրեց այսպէս։

—« Ոգեվից խմիչքներ չափազանցօրէն գործածողի ջէ պարկը [2]) քիչ ժամանակից յետոյ կծկուում է և այնուհետեւ բաց ու խուսի չէ լինում։ Պարկի շուրջ, մանաւանդ նորա ներքեւի մասերում շարուած մսեղէն օղակները բթանում ու քարանում են։ Վերեւից, այսինքն բերանից եկած ամենօրեայ կերակուրը՝ չէ ձիթահանվում, չէ ճմռուում, այլ կոչտանում ու այնպէս պարկին միջին մնում է. մսեղէն օղակները ժաժ չեն գալի, երկայն ազիքը, եթէ մինչեւ այդ ժամանակ պատռած չէ, կուչ է եկած, պարկի ծակին դէմ առած ճամբայ չէ տալիս։ Լեղիի պարկը սկքած է։ Կամաց կամաց ծուխ ու մուխով լեցվում է ջէ պարկը և գոցում ամեն ծակ ու ճեղ։ Կերակուրը պարկի միջին ուզում է պճպճալ, եփ գալ, սակայն մուխ ու ծուխը փչում, իսկոյն հանդչեցնում է կըրակի կայծերը։ Արիւնը կոտանցնում է իրան ալ-գոյնը և կամաց կամաց ստանում է սև օձի գոյն ու կերպարանք։ Հիւանդի փորը ծակծկվում է և սաստիկ տաքանում։ Նորա սիրտը խառնուում, տակ ու վրայ է լինում, բայց չէ յետ գալի. սև օձը իրան պոչը դէմ է տուած պարկի վերեւի բերանին։ Մի քանի ժամանակից յետոյ՝ օձը յանկարծ ցնկնում է։ Մէկ գլուխ ութ հատ ձագ է ծնում, բայց այդ ձագերը օձի ձագեր չեն, այլ գեւի ու վիշապի ձագեր։ Դաբա հէնց որ մօր արգանդիցը դուրս են գալիս, իսկոյն և եթ ծծում, լափում են ջէ պարկի մէջ հաւաքուած կոշտերը, բայց չեն կշտանում։ Դոցա ամեն մէկը ալիր չորս չորս բերան ու քառասնական ոտքեր ունի։ Սկսում է կատաղի կռիւը։ Դեր ու վիշապի ձագերը այս և այն կողմն են վազ տալիս անդադար, միմեանց բերնի կերը քաշում, քաշքշում։ Նոցա շարժմունքից հիւանդի գլուխը սկսում է երերալ, տրաքուել։ Ոտքի վրայ նա այլ ևս կարող չէ կանգնել և ուշաթափուած վայր է ընկնում։ Դեւերի գլուխը այդ ժամանակ հիւանդի իրանի տակ մնալով, առ ժամանակ ջէ պարկումը տիրում է խաղաղութիւնը և հանգստութիւնը։ Երբ հիւանդը արթնացաւ, կատարեալ անբան դարձած է լինում, ոչ կարող է ուտել, ոչ էլ խմել։ Երբ հիւանդը իրանը ուզղում է, դեւերը թէ և բարձրացնում են իրանց գլուխը, բայց առ ժամանակ այդ գլուխները սառուցիկ ցաւած են լինում։ Մի քանի ժամանակ՝ դեւերը իրանք էլ չչմուած վիճակումն են։ Բայց ահա,ահա նոցա գլխի ցաւը կամաց կամաց անցկացաւ, և ուշ Լեան աղաչան մայրիկդ մեռնի, կռիւն ու չարժումը նորից սկըսուեցաւ։ Հիւանդը իրան իրան բոլորովին կորտնցնում է և անտանելի կսկիծը ու ցաւիցը հայդա նորից զօռ կանէ արաղին։ Դեւերը ՝կլլում են, կլում են այդ արաղը։ Նոքա անկուշտ են։ Ջէ պարկին մէջ երեսուն և երկու բերան կլլում ու ծամում են. իսկ երեքհարիւր քսան ոտքեր ժաժ գալիս ու վազվռում։ Եւ այդ միշտ, շարունակ, տարին տասներկու ամիս, մինչեւ որ...

— Մինչեւ որ գինեղեի մաջոնը... Ամենքը սոսկացին։

— Հա, մինչեւ որ դեւերին սատակեցնող մաջոնը հիւանդին կուտացնեն, ասաց Մարանը և Դշխուհինին աչքով անելով, ձեռքը մաջոնին երկարացրեց։

Խե.

Այնքան զժուարութիւնով և սրտմաշուք վշտերով, այնքան հաւատով ու ջերմեռանդութիւնով պատրաստուած դեղը՝ գործադրութեան ժամանակ, նպատակին չը ծառայեց։ Այդ հանգամանքը Մարանը վերագրեց իրան ուխտադրուժ դտնուելուն։ Այժմ զղջաց պառաւը իւր յանցանքը, բայց արդէն ուշ էր։ Եւ մինչեւ վերջին չունչը՝ Մարանի խղճմտանքի վրայ ծանրացած էր այդ «եօթն մահացու մեղքերից մինը» — ուխտադրժութիւնը։

— Բանը նորանումն է, որ Մարանն ու Դշխուհին մաջոնը ձեռին երբ հիւանդին մօտ գնալով՝ հէնց նոր սկսել էին գործադրել, Գինեղեը արթնացաւ։ Դշխուհին ՝լեղապատառ դուրս վազեց։ Միւս սենեկում չփոթ և երկիւղ տիրեց։ Գինեղեը նորից կատաղեց.—«Հաւատով խոստովանիմ և երկիրպագանեմ»— Մարանը աղօթքին զօռ էր տալիս։ Թորոս աղան տղամարդութիւն բանացնել ուզելով, պառաւին օգնութեան գնաց։

Գինեղեը, կարծես, դորան էր սպասում։ Նա իրան թեւերը Թորոսի շնքովը ձգեց և քաշեց ոտքերին տակն առաւ ու կուրծքին վրայ չոքած՝ խեղդում էր և ճանկռտում խեղճ Թորոսին։

Պառաւը ի զուր աշխատում էր Գինեղեի սուր ճանկերից Թորոս աղայի գէթ վիզը աղատել, նորա եաքեւիցն էլ Հեղնարը՝ նորա եաքեւիցն էլ Նարդոսը՝ սրտատրոփ ներս ընկան։ Դշխուհինի ծամերիցը բռնած Արէգնազանը չէր թողնում ներս գնալ։ Գինեղեի ճնջարանում վաղուց սկսուած էր- կպուր-կպուրը, քաշկռտոցը, ճանկռտոցը և տգեղ հայհոյանքներ։

Այլ ևս հնար չեղաւ հարսին բռնել։ Միմեանց քաշքշտելով հարս ու սկեսուր ներս ընկան։ Կռիւը սաստկացաւ։ Երբ Անթառեանը կնոջը տեսաւ, մի վայրկեան, կարծես, զդաստացաւ. յետոյ նա յանկարծ Դշխուհինի վզովը փաթաթուեցաւ և լկտիաբար պաչչում էր։ Մանկահաս կինը տաղնապիցը դողում էր։ Միւսները զարմանում, մասամբ և ուրախանում էին, բայց այդ ուրախութիւնը երկար չը տեւեց։ Մի քիչ յետոյ գինեղեը կնոջը վզիցն էլ բռնեց։ Նոր իրարանցում, նորանոր արհաւիրք։—«Հաւատով խոստովանիմ և երկիրպագանեմ»—Մարանը անընդհատ աղօթում էր և իւր երեսի վերքերը սրբում։

—« Դուրս, դուրս,անիծածներ, փռա՛ռ ֆռա՛ռ խռռ՛ռ» Գինեղեի դեւերը առաջ եկան կրկին։ Ամենքը թողին հեռացան. ՝Հաւ...ա...տով... խոռ...տո...վա...նիմ » Մարանն էլ ուզում էր այս անդամ հեռանալ, բայց Գինեղեը բռնեց նորան. Նա սկսաւ հարց ու փորձ անել պառաւից։ Վերջինս պատասխանել չէր ուզում.

— Որ ինձ կտոր կտոր անես չեմ ասել... Աստուած է վկայ, Լեան աղաչան, թոյն չէր... աղու չէր... միթէ ես անաստուած ու անխիղճ եմ... վայ ձիւնս գլխիս... իմ մասին այդպիսի բան մտածել... չորնամ... կուրանամ... Աստուած, երկինք, գետին, խաչ, աւետարանն...—Մարանը աշխատում էր համոզել, որ դեղը թոյն չէր, բայց թէ ինչ էր, Մարանը հրաժարվում էր բացատրելուց։ Գինեղեը,ըստ երեւոյթին, պառաւի խօսքերին հաւատաց։ Նա յետոյ իւր մօտ կանչեց կնոջը։ Չէին թողնում Զօռով, խաթրով պառաւը Դշխուհինին ներս բերեց։ Նարդոսի և միւսների չունչը կտրուած է։ Թորոս աղան, դռան միւս կողմում կաղմ և պատրաստ քենուն պաշտպանելու դիրք բռնած էր։ Մանկահասակ կնկայ չինքը, կարծես, առաջն էր ընկել, պառաւը զօռ էր անում աղօթքին։ Մեղմ և հանդարտ կերպով Անթառեանը կնոջ ձեռքիցը բռնեց և ծնդների վրայ նստացրեց։ Ահեղ և սըրտաշարժ էր այդ տեսարանը։ Պառաւը կամենում էր այր և կնոջ առանձին թողնել... Անթառեանը չարացաւ,նեղա-

*) Տես«Մեղու» № 61.

[1]) Այդ մաջոնի (թանձր դեղ) պատրաստելու և գործածելու նկարագիրը մենք զանց արինք, չը կամենալով ընթերցողի համբերութիւնը վիրաւորել։ Կ'ասենք միայն, որ նրա բաղադրութեան մէջ թունալից նիւթ էլ է գանվում։

[2]) Ջէլ, ջղեայ պարկ, ստամոքս։ Ընթերցողը կը տեսնի որ հինաւուրց պառաւի հմտութիւնը մարդակազմութիւնից՝ բաւական նման է գիտութեան աւանդածին։ Շատ հետաքրքիր կարներ մենք դեռ չը դուրս բերինք մեր գրուածքին մէջ։ Գինեղեի նկարագրի կէս մասից աւելին մենք կրճատեցինք և այդ ցաւօք սրտի։

ջաց համար, որոնք այդպիսով միջոց կուտան ի մօտոյ և ճիշդ կերպով ծանօթանալ իրանց գործունէութեան հետ հասարակութեանը, որ ըստ մեծի մասին, անտեղեակ է:

Ի դէպ մեր առաջարկը իրագործելու լաւ էլ ժամանակն է: Ուսումնական տարին դեռ չէ սկսուել և ուսումնարանաց շատաներ տակաւին չեն կազմուել:

Ց. Գ.

ՁԱՅՆ ԲԱՐԲԱՌՈՅ ՅԱՆԱՊԱՏԻ.

I

Ոչ մի բան այնքան դիւրին չէ, որքան ցանկութիւն յայտնելը, առաջարկութիւն անելը, պահանջելը և դատել ու դատափետելը: Օրինակ, ես ցանկանում և պահանջում եմ, որ Կուր գետի ջուրը մաքուր լինի: Ամառնային ամիսներումը Թիֆլիսումը մի փոքր հով ու զով լինի: Կառքերի կռկռոցը խաղաղ քաղաքացու քունը չը խանգարի: Ցանկանում և պահանջում եմ որ հայի և առ հասարակ, ամեն մի ազգի, թէ՛ ընտանեկան և թէ՛ հասարակական կեանքը, լաւ, ժամանակակից և, ըստ ամենայն մասանց, կատարեալ լինի: Պահանջում ես շատ բան եմ պահանջում: Եւ իմ պահանջները, ինչպէս տեսնում էք, բոլորն էլ լաւ են, օգտակար և, նա և իրագործելի: Բա՛յց իմ պահանջները չեն իրագործուում:

— Ինչի՞:

— Նախ՝ նրա համար, որ այն մարդիկ, որոնցից կախուած է իմ առաջարկութեանց կատարումը՝ կամ չեն կամենում և կամ չեն կարողանում կատարել: Առաջին դէպքումը, այսինքն երբ մարդիկ թէ և հասկանում են իմ առաջարկութեան օգտաւէտութիւնը, երբ նրանք ձեռընհաս և պարտական ի՛սկ են իրագործել այդ առաջարկութիւնը, բայց դարձեալ չեն իրագործում—զանազան միջոցներ կան նրանց ստիպելու, պահանջելու, որ առաջարկութիւնը անպատճառ կատարուի:

Երկրորդ դէպքում, այսինքն երբ լաւ առաջարկութիւնը մարդիկ չեն ըմբռնում, չեն հասկանում և, նա և, չեն կարողանում իրագործել—ի՞նչ պէտք է արած:

— Այն, որ առաջարկողը լոկ առաջարկելով չը բաւականայ, այլ նա և առաջարկութիւնը կատարելու միջոց կամ միջոցներ ցոյց տայ: Կ'ընդունուի՞ն արդեօք այդ միջոցները, կը հասնի՞ն իրանց բուն նպատակին, — դա բոլորո՛վին այլ հարց է, բաւական է, որ ես իմ պարտքս կատարեցի: Այսինքն ես մի ցանկութիւն յայտնեցի, մի՛ առաջարկութիւն արի և, որ ամենազլխաւորն է, այդ առաջարկութեան իրագործման համար՝ այս ու այն ձևը, եղանակը ցոյց տուի մի և նոյն ժամանակ: Իմ ձեռքիցն ու գլխիցը միմիայն այսքանն է գուրս գալիս, թող անի ասաւել լաւը, ով որ կարող է: «Մի աբասուն չը հաւանողը— ասում է տաճկական առածը—թող իւր գըբպանիցը հինգ շայի հանէ:»

Խօսքը հայ հրապարակսների վերայ մանաւորելով մենք տեսնում ենք, որ դրանք, դրանց մի մասը, շատ առատ է ցանկութիւն յայտնելում և առաջարկութիւնք անելում, առանց, սակայն, իրանց ցանկութեանց և առաջարկութեանց իրագործման համար՝ որ և իցէ, և ինչ և իցէ մի ձև ու եղանակ ցոյց տալու: Օրինակներ առաջ չենք բերում: Կարդացէք մեր թերթերը և դուք ինքներն կը համոզուիք, որ ընդհանրապէս այդպէս է: Ամենայն ոք, դրեթէ, ցանկութիւն է յայտնում, առաջարկութիւն է անում որ մեր դրութիւնը, փոխուի, որ նրանում կատարեալ վերանորոգութիւն է հարկաւոր նոր և ժամանակակից սիստիմայով:

— Շա՛տ զեղեցիկ. հապա՛ր շնորհակալութիւն ձեր այդ ցանկութեան և առաջարկութեան համար, բայց նախ որ՝ ձեր երգածը շատ հին երգ է երկրորդ՝ դե՛հ մի եղանակ էլ էն, դոնեա, ցոյց տուէք թէ ո՞նց և ի՞նչպէս «մեր դրութիւնը» ժամանակակից սիստիմայով վերանորոգենք:

Բայց այդ «ո՞նց»-երն ու «ի՞նչպէս»-ներն մեզ համար նշանակութիւն չ'ունին: Մենք մեր պարտքը կատարած, վերջացրած կը համարենք, երբ սոսկ մեր ցանկութիւնը յայտնեցինք և առաջարկութիւնը արինք: Բայց դա դեռ բաւական չէ, նա մանաւանդ մեր ազգի վերաբերութեամբ, երբ մենք ինքներս շատ լաւ համոզուած և հրապարակաւ խոստովանած ենք՝ թէ հայ թերթը, հրապարակախօսը ղեկավար և առաջնորդ, ճանապարհ հարթող ու բացանող պէտք է լինի հասարակութեան համար:

Դրանում մենք շատ լաւ համոզուած ենք, այդ միտքը միշտ քարոզելենք, բայց աւա՜ղ դարձեալ բաւականանո՛մ ենք լոկ ցանկութիւններով և առաջարկութիւններով կամ որ նոյն է—«ձայն բարբառոյ յանապատի»:

— Ինչո՞վ մեկնել արդեօք այս ցաւալի, այս հակասական երևոյթը մեր մէջ:

— Նրանով, որ մեր մամլոյ ներկայացուցիչները, նրանց աշխատակիցները, ըստ մեծի մասին, յար և նման են այն ղեկավար, առաջնորդող և վերանորոգողներին, որոց համար մեծ ազգի մեծ վերանորոգիչը *) մի օր ասում էր. «անհմուտ արհեստաւորները շատ վայտ կը վատնեն, և անհմուտ գրագիրները—շատ թուղթ կը կեղտոտեն»:

Որպէս զի՝ ինչ բանում որ ուրիշներին ենք մեղադրում, ինքներս նոյնը չ'անենք, այսինքն՝ որպէս զի մեր թերթերը և հրապարակախօսները, որքան կարելի է, իրանց կոչմանը համապատասխանող լինին,—միւս անգամ մենք ցոյց կը տանք մեր իմացած միջոցն ու եղանակը:

Ց. Գ.

*) Լիւտէր.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԻՒՂԵՐ ԵՒ ՀՆՈՒԹԻՒՆՔ.

Գ.

Խօսենք այժմ հնութեանց մասին:

Քուախրէլ գիւղից դուրս, որտեղ վերջանում են տեղական այգիները, գտնվում է մի ժայռ, որի լանջը գիւղացւոց նոր հանգստարանն է: Այդ ժայռը, որ բաւական մեծ տեղ է բռնում, և միապաղաղ ու ողորկ քարից է զանգուած, ներկայացնում է հայկական հնութիւն,—մի եկեղեցի ս. Նշան անունով: Բայց այստեղ ես կը խնդրեմ իմ ընթերցողից եկեղեցի ասելով երևակայել մի ահագին ժայռ, որից դուրս է փորած մի վիթխարի չէնք, ամեն կողմը իրանց մեծութեամբ ապշեցնող սրահաձև ու սենեկաձև բաժանմունքներով: Եկեղեցու սեղանի վերայ դրուած է Երրորդութեան պատկեր. վէմ-քարի ետևը, պատի վերևում, որ եկած ճամբան մոլորեցնեմ, կախ գլուխ կնիկ. արդար իւղը կերել է, իսկ մոխիրը չրթունքներին քսել, իբր պահեցող է: Գետինն անցնի ինքն էլ իրան կրթած տղան էր: Սակայն ես դեռ կենդանի եմ. քանի չունչս բերնումը է, չեմ թոյլ տայ, որ այդքան և այդպիսի չարչարանքներից ու անարգանքներից յետոյ՝ աղջիկս իրան ոտքը միւս անգամ նոցա չէվքից ներս կոխէ. եթէ մինչ օրս փեսայ կարծես Լևոնը՝ չէ հասկացել թէ ինչ ասել է կին, ամուսին, թող...վերջապէս թող գնայ իրան Եսթերը գտնի...աչունը չանից՝ երկուսը մի անից»:

Նոքա տուն հասան: Վայ այն ընթրիքին որ նոքա արին: Մարկոս աղան դեռ բանից տեղեկութիւն չունէր: Նարդոսը, ինչ ասել կուզէ, մարդուն ամեն բան պէտք է որ պատմէր, բայց նախապէս հարկաւոր էր Դշխուհինից մի քանի տեղեկութիւններ հաւաքել: Պէտք է մայրը իրան աղջկան դեռ «փոստովանացնէր»: Հարցը շատ լուրջ հարց էր, մէջտեղումն մահու և կեանքի խնդիր կար: Ընթրիքից յետոյ ամեն ոք իրան ենջարանը քաշուեց: Միմիայն Նարդոսն էր, որ Դշխուհինի անկողնի կշտից չէր ուզում հեռանալ, մինչև որ ամեն բան տեղնուտեղով չ'իմանար:

— Աղջի՛, Դշխուն, ասում ես թէ գիշերները նա առանձին, իսկ դու առանձին քնանում էիք: Հը՛, ինչ ես պատանձուել, պատասխանիր, էհ:

— Պատասխանեմ. ինչ...

— Զօռ ու պինչ, պատասխանիր էլի, չես հասկանում...

— Մա՛յր, յիմար յիմար ես խօսում:

— Յիմարին մեծը դու ինքդ ես, յիմա՛ր: Ես քեզ մարդավարի բան եմ հարցնում, իսկ դու ինձ յիմար ես ասում, հը, հը, հը: Նարդոս խանումը կրկին լաց եղաւ:

— Մա՛յրիկ, ինչի՞ ես լալիս:

— Զայնդ քաշի՛ր, գետինը մտնիս:

— Հազար երանի չէ՞ր.

ցաւ: Պառաւը աքլեց ու իրան տեղում նստած քնթի տակով փնթփնթում էր:

— Գալիս ես, Դշխուն, քնքոյշ ձայնով հարցրեց Լևոնը կնոջից:

— Ո՞ւր... Դշխուհին մի փոքր սիրտ առաւ:

— Մեր վաթանը:

— Ձեր վաթանը... ո՞ւր է քո վաթանը:

— Այնտեղ, հեռու, հեռու... Գիներդը լաց եղաւ: Դշխուհին էլ լացեց: Անթառեանը հանեց իրան թաշկինակը և սրբում էր թէ իրան և թէ կնոջ արտասուքները: Յետոյ նա խօսքը շարունակեց:

— Դու այնտեղ մեղ մօտ կը մնաս... այն ժամանակ ես քեզ շատ կ'սիրեմ... Աստուած է վկայ, Դշխունջան... Հիօ, հիօ հիօ, Արէգնաղանը հաղալ սկսաւ դրսից. Արէգնաղանի հաղը կեղծ էր: Մօր հաղի վրայ Լևոնը մի դիւական ծիծաղ բարձրացրեց: «Հաւատով խոստովանիմ և երկիրպագանեմ» Մարանն էլ, իւր հերթում, աղօթքին զօռեց.

— Քեաւթառ Մարան...

— Ջան, հաջան... Անթառեանը հենգնեց. պառաւը ողջագունեց:

— Եթէ ուզում ես, դնանք: Սպասիր թող սկեսայրս Պօլսից վերադառնայ. մերոնց էլ վերառնենք և միասին դընանք, այո՛, գնանք: Այս ասողը ոլկին Դշխուհին էր:

— Դու կարծում ես, Դշխունջան, թէ նա... ո՛չ, նա քեզ վրայ վատ աչքով՝ չի նայիլ... նա... քեզ...

Նա. ոմ է նա...

— Ես...թէ...բը... Թաքք, թաքք, միւս սենեկի դռները բացուեցան յանկարծ: Կնիկ-արմատները մէկմէկու ետքից ներս թափեցան: Արէգնաղանը աշխատում էր որդւոյն բերանը բռնել. Նարդոսը Դշխուհինի ձեռքից բռնած՝ սենեկից դուրս էր հանում: Եսթեր բառը ամենքն կայծակնահար արաւ: Կռիւ, իրարանցում, քաշքռտոց, ծեծկռտոց նոր մէկանց սկսուեցան: Թորոս ու Մարանը մէջ մտան և խաղաղացրին.

— Թէ՛ քո երեսին, անամօթ. քեզ նման մօրը՝ դրողը թող խեղդէ, Նարդոս խանումը մէկ փեսայի երեսն ի վեր թքեց, մէկ խնամի քուրիկին հայհոյեց և իրան աղջկան ու Մարանին հետը վեր առած քաշուեց գնաց իրանց տունը: Թորոս աղան մնաց, հարկաւոր դէպքում Արէգնաղան խանումին օգնելու կատարած որդւոյն դէմ: Լևոն Անթառեանը անկողնի վրայ ընկած՝ բարձրաձայն լալիս էր, երբեմն գլխի մաղերը պոկելով:

Խնամիները վերջնականապէս միմեանցից խռովեցան: Նարդոս խանումի համար հիմայ ամեն բան պարզ էր: Նա չէր կարող տանել այն նախատանքին, որին, ճակատ առ ճակատ, ենթարկուեցաւ Դշխուհինը մարդու կողմից: Մինչև անգամ մօրը, Նարդոսի, աչքի առաջ: Խեղճ Դշխուհի... այս անդամնա էլ մահու չափ վիրաւորուեցաւ: Մինչև հիմայ կրած նախատինքներն և քաշած վշտերն մանկահասակ կնկայ համար ոչ ինչ էին այդ օրվայ կրած նախատանքի համեմատութեամբ: Եսթեր... ուրեմն Դշխուհինի մարդը մի ինչ որ Եսթեր է ունեցել: Ուրեմն այսքան տարվայ ընթացքում մանկահասակ կնկայ բաղդին հետ այդքան անդթօրէն խաղանողը մի այլ կին է եղել: Երկար ժամանակ լալուց յետոյ Լևոնը, վերկացաւ, սուս ու փուս հանուեցաւ ու իրան անկողինը մտաւ: Վշտաբեկ Արէգնաղանը Թորոսի անկողինը պատրաստելով, ինքն էլ իրան ենջարանը քաշուեցաւ: Բայց դրսի դռան բանալին նա իրան մօտ պահեց: Ծառային էլ պատուիրեց, որ եթէ յանկարծ Լևոնը փողոց գնալ կամեցաւ, չը թոյլ տայ, այլ իսկոյն և եթ իրան, Արէգնաղանին, ձայն տայ: Թէ անկողնի մէջ պառկած ինչ բաների վրայ մտածում էր ողջ գիշերը ոսկերիչ խաչօղլի ընկերոջ կինը, Արէգնաղան խանումը, այդ արդէն դիւրին է մակաբերել: Թորոսի համար էլ այսքանս պէտք է ասած, որ այդ մարդն էլ անկողնի մէջ երկար ժամանակ տանջվում էր իրան քենակալի ճանկերից ստացած վէրքերով:

— Հապա քամբաղդ Դշխուհին, հայրիկ, հարցրի ես ծերունուց:

— Գեղ ասացի, որ նա գնաց հօրանց տուն: Մայրը նորան տարաւ, տարաւ որպէս զի էլ յետ չը դարձնէ:

ԽԶ.

Մինչև տուն հասնիլը Նարդոս խանումը, Մարանից և աղջիկներից ծածուկ, շարունակ փնթփնթում ու քամահարում էր.—«քա մեղա, էրզուրումցի խանում—քուրիկս մենակ աղջկաս անծննդականութիւնը իրան մատին փաթաթց է արած, իսկ իրան անպիտան աղջային փչութիւնների մասին մինչ օրս մի խօսք անդամ ինձ չէ ասած:—Քա, տեսնում էք:—Ի հարկէ այդ բանը նրա համար ձեռնտու չէ, ոչ ոք իրան թանին՝ թթու չէ ասում: Սուրբ Սարգսայ խօսքը ճշդեցաւ.—«Շողեր, ակնդ չի տեսանես» [3]: Ես նորան ոչ կաղ և ոչ էլ կոյր աղջիկ չեմ տուած, չէր հաւանում թող չ'ուզէին, չ'առնէին: Խեղճ աղջկան ես պահեցի, մեծցրի, մարդու տուի նորա համար միթէ, որ այդ փուչ մարդը այսքան տարի անարիւն նահատակ չինէ խղճուկիս, և վերջ ի վերջոյ էլ աղջկան աչքին առաջ իրան սիրիկաների զովքն ու պատմութիւններն անէ... «Ամօթխած է, մարդատեաց է, գինեմոլ է, գինեղե՛ է» չեմ իմանում էլ ուրիշ ինչ զահրուզոփում է... բոլորն էլ փըչութիւններ: Եւ այդ ամենը միմիայն մեզ յիմարացնելու համար է եղել... Տէր Աստուած... Յիսուս ու Քրիստոս... Թող ապասէ Արէգնաղան խանումս. ես նորա դլխին այն օյինը բերեմ, ես այն օյինը պանում:

— Բայց, մի և նոյն ժամանակ, հէնց այդ սկեսայրդ էր էլի, որ քեզ հրամայում էր այդ մասին ինձ ոչինչ չ'ասել:

— Հրամայել չէ, բայց խնդրում, աղաչում էր համբերել մինչև որ...

— Մինչև որ քո աղա մարդը նոյն իսկ իմ երեսին համարձակի իրան սիրականի անունը յիշել, հա, այնպէս չէ:

— Սկեսայրս չէր ուզում, որ ձեր ու մեր մէջ նորանոր դժուութիւններ ծագին:

— Իսկ ինչ վերաբերում է քեզ...

— Ես ուզում էի, և էլի ուզում եմ, մայր, ճակատագրիս հնազանդ մնալ: Երևի, ես ասում եմ, յանցանքը բոլորը միմիայն փեսայիդ կողմիցը չէ...

— Բոլորն էլ: Ես ինքս էլ այդպէս էի կարծում, բայց հիմայ... ոչ փեսաս, ոչ էլ նորա ծուկթան մայրը այլ ես չեն կարող յիմարացնել ինձ: Եւ քո խանումի սկեսայրը քեզ չէր պաշտպանում... հը, հը... Նարդոս խանումը լաց եղաւ:

— Պաշտպանում էր, բայց ինչ օգուտ: Ընդհակառակը, շատ անգամ սկեսայրս ինձ պաշտպանելու համար որդուցը ծեծ էլ էր ուտում:

— Զորանան, փեսանան, գոսանան, այդ տեսակ զաւակի ձեռքիրը:

— Աղջի՛, Դշխուն, ասում ես թէ գիշերները նա առանձին, իսկ դու առանձին քնանում էիք: Հը, ինչ ես պատանձուել, պատասխանիր, էհ:

— Պատասխանեմ. ինչ...

— Զօռ ու պինչ, պատասխանիր էլի, չես հասկանում...

— Մա՛յր, յիմար յիմար ես խօսում:

— Յիմարին մեծը դու ինքդ ես, յիմա՛ր: Ես քեզ մարդավարի բան եմ հարցնում, իսկ դու ինձ յիմար ես ասում, հը, հը, հը: Նարդոս խանումը կրկին լաց եղաւ:

— Մա՛յրիկ, ինչի՞ ես լալիս:

— Զայնդ քաշի՛ր, գետինը մտնիս:

— Հազար երանի չէ՞ր.

---

[3]) Ս. Աւետարանի խօսքը—«Զի տեսանես զչիւղ յական եղբօր քո».—Շողերը՝ Շողակաթ յատուկ անուան կրճատածն է:

բայ քանդակուած է երկու մեծ խաչ. մի բարձրութեան վերայ դրուած է 1/2 արշինանոց երկաթէ խաչ. եկեղեցին վերնատուն էլ ունի։ Սեղանի աջ կողմից կայ մի՞մուտք, որ ձախ կողմից տանում է դէպի մի մթին այր, սորա հանդէպը մօտ 5 սաժէն երկայնութեամբ ու 4 արշին բարձրութեամբ սրահ է ձգւում, որտեղ Զատիկ օրը մերձակայ գիւղերից եկած ուխտաւորները նստոտում հաց են ուտում. սորանից յետոյ դարձեալ մի սրահ 10 սաժէն երկայնութեամբ և 1 սաժէն լայնութեամբ. ապա մի բարձր ու լայն սենեակ 3 սաժէն բարձրութեամբ, որի դուռը մի այրով դուրս է տանում դաշտը։

Եկեղեցու պատի արտաքին երեսի վերայ խաչեր են քանդակուած. դոցանից երկուսի տակը գծուարվերծանելի արձանագրութիւնք կան, որից ես հաղիւ այս բառերը կարողացայ կարդալ. «Կանգնեաց սուրբ խաչս ի բարեխօսութիւն (իշխանին՞) և իւր կողակցոյն... զօրաւոր...»։ Եւ այդ բոլորը շինուած է մի՛ քարից։ Շինողը, որի անունը չը կարողացայ գտնել, թագուած է եկեղեցու մուտքի դրանը կառուցած զանգակատան տակը։ Շինել տուողը, ասում են, վրաց թամար թագուհին է շինել նոյն հայ վարպետի ձեռքով։ Դորա անունով է կոչւում կողքին կպած նոր գիւղը, որին արդէն ծանօթ է ընթերցողը։

Թէպէտ քաղաքը իսկապէս մի գիւղի մեծութիւն ունի, մօտ 1/2 վէրստ երկայնութեամբ և դորան համապատասխան լայնութեամբ, սակայն բոլոր տների, խանութների ու բնակութեանց մի և նոյն վիթխարի և իւր լարձրութեամբը սոսկալի ժայռից շինուած լինելը անկարելի է, որ չ'ապշեցնի ու մի առասպելական քաղաքի յիշատակութիւնը չը նորոգի ամէն այցելուի մէջ։

Յաւալի է, որ պատերի վերայ եղած վրացի և ռուս այցելուների ստորագրութեանց մէջ ոչ մի տեղ չէ երևում ոչ շինողի անունը, ոչ շինելու թուականը։ Հետաքրքիր էր քաղաքիս դէթ համառօտ պատմութիւնը լսել վրացի ուսեալներից, որովհետև գիւղացու դիտեցածը դորա մասին՝ բացի արդէն ասածից, այն է միայն, որ Լեկերի յարձակումներից դէմ պաշտպանուելու համար է շինած այս քաղաքը։ «Ռուիլիս-Ցիխէ» նշանակում է «Ցիրօջ բերդ»։ Թէ որքան ճիշդ է այդ նպատակով շինուած լինելը, այդ ևս չը գիտեմ. և զարմանալի ևս չէ, մինչդեռ պատմութեան մէջ շատ քաղաքներ ենք տեսնում շինուած՝ թշնամիներից ապահով մնալու և նոցա վերայ իրանց զէնքի զօրութիւնը գործ դնելու համար։ Զարմանալին միայն այս է, որ ողջ քաղաքը մի մեծ ժայռից է դուրս փորուած։ Գուցէ այդ բանին նա և ժայռի փխրունութիւնն էլ է նպաստել։ Եւ, եթէ ես չը գիտեմ պատճառը, թէ ինչու այսօր այդ քաղաքը ամայի է, դէթ քարի իմ յիշած յատկութիւնից կարծես ըստ ինքեան եզրակացնում է պատճառը։ Անձրևի, արևի, ու հողմի հարուածների տակ ժայռի արտաքին կողմերը մաշուած ու մաղուած են. և շատ տեղ այնպիսի փորուածքներ կան, և այնպիսի վիթխարի մեծութեան քարեր կան ցած գլորուած, որ էլ ուրիշ կապածի տեղ չէ մնում։ Արդեօք Թիֆլիսում կայացած հինգերորդ հնագիտական ժողովի կողմից մի յանձնաժողով եկել այցելել է այս ամայի քաղաքին։ Արժէր։

(Կը շարունակվի.)

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ։

Սերբիոյ և Բուլգարիոյ մէջ ծագած տարաձայնութեանց վերջ տալը՝ յանձնուած էր Աւստրիոյ, Գերմանիոյ և Ռուսիոյ ներկայացուցիչներին։ Դոքա այժմ իրանց գործը վերջացրել են և իրանց կազմած վճիռների արձանագրութիւնքը մատուցել են իւրաքանչիւրը իւր սէրութեան։ Վճիռների ինչ լինելը առ ժամս գաղտնիք է նոյն իսկ Սերբիոյ համար։

—

Վատոմնդոսը, որ Ֆրանսիոյ դեսպանն էր Լօնդօնում, թողնում է իւր պաշտօնը։ Պատճառը, ասում են, այն է, որ նա և ի դէմս նրա՝ Ֆրանսիան, վիրաւորուած է Գրէնվիլլի վարմունքիցը Եգիպտական հարցի առթիւ։ Լօնդօնում կայացած ժողովի ժամանակ։ Գրէնվիլլը Վատոմնդոսի ճառը անդադար ընդհատում էր։

—

Անգլիան և Տաճկաստանը միմեանց հետ բանակցում են Եգիպտոսի անկարգութիւնքը զսպելու համար այնտեղ նոր զօրք ուղարկել թուրքը բանակից։

—

Ռուսիան ցանկանում է Թուրքիոյ հետ առևտրական նոր դաշինք կազմել։

—

Գերմանիան վերջին ժամանակներումս աչքարաց հակառակ դիրք է բռնել դէպի Անգլիան, և թէ տեղի թէ անտեղի պահանջներով աշխատում է գրգռել նրան։ Բայց Անգլիան ոչ միայն զրգռուող չէ, այլ իւր շահերն ու պատուասիրութիւնը այրարար պաշտպանելու եղանակն էլ շատ լաւ իմանում է։ Երկու ահեղ տէրութեանց մէջ զարթած այս տարաձայնութեանց պատճառներն են 1) Գերմանիոյ արած պաշտպանութիւնը, Լօնդօնի վերջին ժողովումը, Ֆրանսիային։ 2) Նրա պահանջը Եգիպտոսի առողջապահական վիճակի մասին։ 3) Ալեքսանդրիոյ ռմբակոծման ժամանակ վնասուողների փոխարինութիւնը։ Միւս կողմից Անգլիոյ պահանջը՝ Անգրա-Պեկվէնի երկրի համար, որ գտնվում է հարաւային Աֆրիկէում և որ Գերմանիան տիրեց, և ուրիշ մի քանի մանր մունր պարագաներ։ Այս հարցերի առթիւ երկու աղգաց լրագրութիւնը և քաղաքագիտութիւնը մեծ եռանդով գործում են, բայց այդ գործունէութիւնը տակաւին որոշ կերպարանք ստացած չէ։

—

Քաղաքական տարաձայնութիւնքը խաղաղ ճանապարհով քննելու և վերջացնելու համար՝ Բերլին քաղաքում միջազգային կոնդրէս կազմուեցաւ։

—

Ասիոյում անկարգութիւն անող թիւրք զինուորների մասին վճիռ կայացաւ։ Զինուորներից ոմանք մահուան դատապարտուեցան, այլք երկարամեայ բանդարգութեան։

—

Տրապիզոնի կողմերում մի նոր սուտ մարգարէ երևեցաւ Հոջա Հասան անունով։ Նրան թէ և բանդարկեցին, բայց, ասում են, նոր Մահդին, արդէն իւր հետևողներն ունի Սև ծովի ափերումը։

—

Զայն կայ թէ՝ Անգլիան մտադիր է Եգիպտոսում ունեցած զօրաց թիւը 10 հազարով աւելացնել։ Գորդոնին ազատելու համար էլ 1,000 հատ թիավար նոր նաւեր է շինել տալիս։

—

Չինաստանը եւրոպական տէրութիւնների մօտ միջնորդներ ձգեց իւր և Ֆրանսիայի մէջ եղած վերջին տարաձայնութեանը մի կերպով վերջ տալու։

—

Ալեքսանդրիայի ռմբակոծումից վնասուող օտարականներին փոխարինութիւն պիտի անէ Անգլիան։

—

Անգլիական ծովահէնքը վերջին ժամանակներումս բաւականին վնաս հասցրին Գերմանիոյ ձկնորսներին։ Մի նաւ ևս ընկղմեցին։ Այդ բանը այժմ լրագրական բանակռուի նիւթ է դարձել Անգլիայի և Գերմանիայի մէջ։

—

Սալոնիկի ֆրանսիական հիւպատոսը,

— Ինչի՞. քան զգեստնը մանկը, աւելի լաւ չէ, ամէն բան ինձ տեղն ու տեղը պատմես, որպէս զի ես էլ հօրդ հետ խորհուրդ անեմ, և օր առաջ այդ բանին մի ել-ճանապարհը գտնենք։ Եթէ ոչ, այսպէս գնալով, ոչ երևաններումս առ ու ամօթ մնաց, ոչ բերաններումս համ ու լաղութ։ Անիծուէր, Արէգնազանին ինձ պատահած օրը, անիծուէր։ Հէյ, էլի լռում ես. աղջի, չը պատասխանես, խենթ։ Դու և նա առանձին առանձին ննջում էք, հէ՞, ասա։

— Քա՛, հա։

— Դրող ու մահ։ Քիչ էր մնում թէ Նարդոսը խելքը թոցնէր։ Նա չարունակեց դատեր խոտովանեցնելը։

— Աղջի՞, Դշխուն, մի՞չա, ամէն երեկոյ։

— Շատ անգամ։

— Այն էլ, կարելի է, երբոր հարբած է լինում, այնպէս չէ։

— Ո՞ւֆ, մայրիկ։ Դշխուհին զայրացաւ, զզուեցաւ մօր անտեղի հարցմունքներից.—Ես չեմ իմանում թէ այրքան տարուց յետոյ, հիմայ քեզ ինչն է ընտիպում այդ տեսակ խիստ դատ ու դատաստան սարքել իմ և իմ մարդու վրայ, այդքան փորուվիլ ու քերվտիլ, քեզ ու քեզ։ Եւ այդ այսօր, հէնց հիմայ, մայրիկ ջան, հիմայ, հիմայ։

Դշխուհին չը կարողացաւ արտասուքները բռնել։ Նա լաց եղաւ։ Զարացած՝ նա գլխին քաշեց վերմակը, մօրից շուռ տուեց երեսը և խղդուկ ձայնով հեծկլտում էր։ Այլ ընդ այլոց եղած մայրը՝ հեռացաւ աղջկայ կշտից։

Խէ։

Ասլանեանը—ինչպէս քեզ ասացի — տակաւին բանից տեղեկութիւն թէ և չունէր, բայց Դշխուհիի նոր մէկանց, անսպասելի կերպով հօրանց տուն գալը, Նարդոսին. այդ քան երկար միջոց, նորա անկողնի մօտ նստիլը, Մարկոս աղայի համար բաւական էին հասկանալու, որ էլի մի բան է պատահել։

Մարկոս աղայի քունը այդ պատճառով չէր էլ տանում. Անկողնի մէջ նըստած, ֆարաջան քամակին ձգած՝ Ասլանեանը մեծ մտատանջութեամբ ծը խում էր, և կնոջ գալստեան սպասում։ Վերջապէս Նարդոսը ներս մտաւ։

— Հէ՞, դոցա մէջ հօ էլի մի սև կատու անցկացած չէ, հարցրեց մարդը կնոջը։

— Սատկի կատուն էլ ու ամէն բանն էլ. Դշխունը մեզ համար զաւակ հօ չէ՞ զա, այլ մեղաց պտուիւ, ցա՛ ու վիշտ անդրա։

— Դէհ ասա, ասա տեսնենք էլի ինչ նոր բան, Մարկոս աղան նստած տեղում չտկուեցաւ և ծխափայտը նորոգեց։ Կինը մարդուն ամէն բան պատմեց։ Ասլանեանը չէր ուզում հաւատալ, որ իրանամի Գրիգոր աղան, այդ Աստուծու կըրակի տէր [4]) մարդը, այդ առաքինների առաքինին, իմաստունների իմաստունը, ողջ Էրզուրումին, նորա բոլոր վալիներին ու փաշաներին իրան մատին վըրայ մանածող Անթառեանը, հարազատ զաւակին կրթելու և իրան օջախի համբաւին ու վարկին համապատասխան դաստիարակութիւն տալու անկարող լինէր.—չէ, կնիկ, չէ, չէ «վերատէն է, վերատէն» [5]) այդ պատիւ պատուհասը, բացագանչում էր Մարկոս աղան։ Եւ որովհետև այդ այդպէս է, ա՛ կնիկ,— Ասլանեանը խորհրդաւոր կերպարանք էր տալիս ձայնին — ուստի դարձեալ համբերութիւն է հարկաւոր, համբերութիւն, Քրիստոսի տանջանքեայ պատուէրներուն առաջինը՝ համբերութիւնն է։

— Համբերութիւնն էլ չափ ու սահման ունի. ախր մինչև երբ։ Մենք էլ, խեղճ աղջիկս էլ հալումաշ եղանք. խըղճուկս կատարեալ օգոստոսի աղուէս է դարձած, հէ՛, հէ՛, հէ՛...

Եթէ լալով բանը դրստուէր, վաղուց մեր այս քամբաղդութեանը՝ վերջ էր դրուած։ Այս չորրորդ տարին է, տա՛ս, ես դիշեր և ցերեկ չարունակ լալիս եմ ա՛ կնիկ, լալիս և ոչ ոք իմ լացը չէ լսում, չէ տեսնում...

— Լաւ որ դու ինքդ ես ասում. ուրեմն մի այլ հնար պէտք է մտածել թէ ոչ։

— Հնարին լաւը ես ինքս շատ լաւ եմ իմանում, բայց մէջտեղում «Ա» կայ, մի մեծ «Ա» [6]) այ կնիկ։ Էրզուրումում լինէինք, ես գիտէի թէ ինչ կանէի, ջրաղացի այս ծանր քարը ես ոնց կը պրատացնէի։ Սարայի մութ դընդանին մէջ շարաթներով, ամիսներով, քաղցած ծարաւ, թող փեսաղ մնար, թողնա ուտէր այնտեղ կուշտ կուշտ փալախան, և դու կը տեսնէիր թէ ինչպէս շուտ կը խելօքանար, իսկ այստեղ...

— Մինթէ այստեղ օրէնք ու դատաստան չը կա՞։ Առաջին անգամ երբ 15 օր բանդումը մնաց, տեսար թէ ոնց խելօքացաւ։ Դու ինքդ չէիր, որ խնամուդ հետ միասին «փառաց ի փառս բարձրացնում» էիք այս երկրին օրէնքը, դատաւորները. հիմի ինչ եղաւ, փոխուեցաւ մինթէ այդ օրէնքը։ Երկուսով միասին հիմի ինչի՞ այդքան թուլացաք ու կապերտի չորս ծայրն էլ դեան ի վեր՞բաց թողիք։

— Գոմէ՛լ, փառաց ի փառս՝ բարձրացնել, հրմ։ Մեծունանց սատի նման «Որ չդայ բեռն ի վրան, որ եկաւ բեռն ի վրան, դիր ի դետին, եկ ի վրան»։

— Զարմանք, ես էլ ոնց ուրախանում էի այստեղի օրէնքի խստութեան վրայ։ Ես էլի կարծում էի թէ... բայց ինչ էլ որ լինի, այ մարդ, դու մէկ էլի դատաւորներին խօսիր...

— Կարծում ես չեմ խօսել, չեմ խնդրել, հազար անգամ ձեռքներն ու ոտքերը չենք ընկել, թէ ես և թէ խնամի Գրիգոր աղան։ Դիս անցեալ օր էլի դատաւորի կշտին էի։

— Ի՞նչ ասաւ։

— Ասում է, օրէնքը չէ թողլ տալիս։ Մի անգամ էլ որ ոստիկանութիւնը, ասում է, փեսայիդ բանդարգած էր, օրէնքի հակառակ բան էր, ասում է, իսկ հիմայ, այսուհետև, անկարելի է, ասում է. Ցաճկականդայդ բռնաբարութիւնները, ասում է, մեղանում չը կայ. բռնաբարութիւն, այ կնիկ. հասկանում ես. Մինչ օրս, ասում է, քո փեսան մի առանձին անկարգութիւն արած չէ, ոչ ոքին խըփած, թակած չէ, գողութիւն արած չէ, ուրեմն և ոչ ոք իրաւունք չունի նրան բանդարգել։

— Ոտքերիդ մատաղ, ասում եմ ես դատաւորին, ախր փեսան գինեսներիցը չէ դուրս դալի. փողը ջրի նման այս ու այն կողմն է չպատում, անպատիւ ու լօղի ուղերանց հետ նիստ ու կաց անում, մեծի ու փոքրի պատիւ ճանաչել բնաւ չէ ուզում, վերջապէս,—ասում եմ ես դատաւորին—փեսան աղջկաս, իւր կնոջը չէ սիրում, ախր դրան մի հնարք պէտք է գտնել թէ ոչ. Փոխանակ մարդավարի ինձ պատասխան տալու՝ պարոն դատաւորը երեսս ի վեր ծիծաղել սկսաւ, ծիծաղել, եա՛, կնիկ. Էրզուրումի ձեր այդ ֆանդերը, ասում է, մեզ մօտ այստեղ չէ՞ մնցկենում,-ֆանդ, կնիկ-արմատ, Մոսկօֆի պարոն դատաւորը իմ խօսքերին ու խնդրին ֆանդ է անուանում, ֆանդ, այ աչքի լոյս...

— Քա՛ այդ դատաւորը ո՞վ է։

— Ով ուզում է լինի, բայց նա մեր քաղքի դատաւորն է. ձակատին վրայ թագաւորի նշան—կոկարտ—է կրում և միչտ և հանապազ օրէնքիցը խօսում։

— Քա՛ մէկ դու ինձ ասա, թէ այդ անիրաւը ո՞ւմ որդին է։

— Ո՞ւմ որդին լինելը չը գիտեմ, միայն այս աչքերովս ամէն օր տեսնում եմ ես այդ դատաւորին։ Բերանիցը դեռ ես կաթի հոտ է գալիս, գրպանները՞ն էլ, աւտաս, միչտ մկներն են ժաժ գալի,— մի խօսքով, ա՛ կնիկ, մի... մի կատարեալ չոճուղ։

— Եթէ դատաւորիցը յոյս չը կայ, գոնեա դու մէկ «մեծաւորին» [1]) հանդիպիր։ Էլի նա ինքը կարող է մեզ մի ճար անել։

— Գերեզմանիցը... ցնդել ես, կնիկ։

— Քա՛ ես լաւ իմանում եմ, որ մեր մեծաւորը վախճանել է, բայց չէ՞ որ նրա փոխարէն մենք ուրիշ մեծաւոր ունինք այստեղ, նա, որ աղջկաս սեսամութ պակի խորհուրդը կատարեց։

— Հէյմ, հէնց դրանով էլ մեր այժմեան մեծաւորը իւր բոլոր պարտականութիւնը կատարած ու վերջացրած համարեց։ Այժմեան մեծաւորները, ա՛ կնիկ, մեծաւորներ չեն, այլ սրբազաններ... դու միայն կաս յերուսաղէմ։

Նարդոս խանումը՞ մարդու խօսքերի վրայ, կայծակահար եղաւ։ Ցուսահատութիւնը տիրեց նրան։ Որովհետև ոչ մի տեղից յոյս ու ակնկալութիւն չը կար։ Նախընթաց երեկոյին, երբ նա իւր դուստրը խնամուց տանիցը դուրս հանեց, հաստատ մտքումը դրած էր, որ, կամ օրէնքի զօրութեամբ, կամ, գէթ, մեծաւորի օգնութեամբ, պիտի կարողանայ ոչ միայն փեսային սանձահարել ու կոկսի չինել, ծակը կոխել, այլ նա և նրա մօր հախիցն ևս փառաւորապէս գալ։ Սակայն այժմ... այժմ, ո՛վ բաղդ սևերես, այժմ, «Շողո՛ր, ականդ չի՞ տեսանես»։

(Կը շարունակվի)։

---

[4]) Շատ հարուստ.

[5]) Ի վերուստ, երկնից.

[6]) «Եւ»-ը թիֆլիզցիների մախալատ բառով արտայայտուած խնասին է համապատասխանում։

[1]) Կարապետ Արքեպիսկոպոսին մեծաւոր էին անուանում գաղթականները։

ինչին պատճառով, Թիւրքիոյ մաքսատան աստիճանաւորին գաւազանածեծ արաւ Բ. Դուռը այդ մասին Կ. Պոլսոյ դեսպանատանից բացատրութիւն և բաւարարութիւն է պահանջում։

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Պ. Ն. Թառումեանց և Դ. Մինասեանց Վարչաւից մեզ ուղարկել են 14 ռ.։ Այս գումարը պարոնները ժողովել են, յօգուտ Ագուլիսի հեղեղից վնասուողներին, Վարչաւի հետեւեալ ազգայիններից. բժ. Գաբրիէլ Շահիկեանց 1 ռ., Գրիգոր Մինասեանց 3 ռ., Միքայէլ Ղազեանց 1 ռ., Պետրոս Խոջայեանց 1 ռ., Միքայէլ Զոհրաբեանց 5 ռ. և Մուրատեանց 3 ռուբլի։

* * *

Թեմ. վերատեսուչ պ. Ղազարոս Աղայեանցը մեզ ցոյց տուեց Ներսիսեան դպրանոցի և Գէորգեան ճեմարանի ընթացաւարներից չատերի խնդիրները, յայտնելով, որ դրանցից մի քանիսին արդէն նա ուսուցչական պաշտօն տուել է։ Միւսներին էլ, որքան հնարաւոր է, կ'աշխատի տեղաւորել։ Թէ նա, պ. Աղայեանցը, Ներս. դպրանոցի և Գէորգեան ճեմարանի սաներին ամենամեծ սիրով՝ աշխատել է և աշխատում պաշտօներ տալ, ի հարկէ, եթէ չը կան առանձին արդելաւորիչ պատճառներ։ Որովհետև «Մեղուի» № 55-ի առաջնորդող յօդուածում, այդ առթիւ, մենք յարձակուել էինք պ. Աղայեանցի վրայ (հիմնուելով մեզ հասած զանգատների վրայ, ի հարկէ), ուստի այժմ, արդարութիւնը վերականգնելու համար, ուրախութեամբ հրատարակում ենք, ահա, և՛ պ. Աղայեանցի մեզ հաղորդած տեղեկութիւնքն, որով հերքվում է մեզ հասած զանգատը, իբր թէ պ. Աղայեանցը մերժելիս է եղել Ներս. դպր. ընթացաւարներին պաշտօն տալը։

* * *

Գալ տարի Բրեսլաւ քաղաքում կատարուելու է կազմարարութեան արհեստի 300 ամեակը։

* * *

Երևանից մեզ գրում են թէ պ. Վասակ Պապաջանեանցը հրաւիրուած է ի չարս ճեմարանի ուսուցչաց։

— Ընթերցողները յիշում են, հարկաւ, որ պ. Վասակը «Պսակ» անուանեալ թերթի խմբագիրն էր մի ժամանակ։

* * *

«Նովոյէ Օբոզրէնիէ» զանգատվում է, որ Գրիբոեդով բանաստեղծի չիրիմը, որ Մթացմինդայի եկեղեցումն է գտնվում, շատ անմաքուր է պահվում։

* * *

Ղզլարի խաղողի բերքը այս տարի շատ առատ է։

* * *

«Նոր-Դարին» Աղնախից գրում են, որ Վիլիսցիներ դիւղում չորս ամսից ի վեր սաստիկ տարածուած են ծաղիկ և սկառլատին։ Թէ չափահաս և թէ անչափահաս մարդիկ զոհ են դնում։ Այլք դիւղից փախչում են դէպի այգիները և մօտակայ դիւղերն ու քաղաքները։

Հիւանդութեան առաջն առնող չը կայ։

* * *

Սկառլատինը—գրում է «Դրօէբայ»—տարածուած է նոյնպէս և Կվիշխեթի գիւղում։ Հոգացող նոյնպէս չը կայ։

* * *

Ռուսաց ս. սինոդի օրեր պրօկուրի հաչուից տեղեկանում ենք որ Կովկասում ուղղափառ դաւանութիւնը տարածող ընկերութեան» ջանքերով անցեալ տարի 50 մահմեդականներ մկրտուած են։

* * *

Պ. Սաղաթելեանը, որ Երևանի նահանգի անտեսական վիճակի մասին մի գրքոյկ է հրատարակել, անցեալներում Ջալալօղլիում մի քանի հնութիւններ է գտել, այն է մի հինաւուրց և մեծակակացին, նիզակ և աբարանջան։

* * *

Ներսէս պատրիարքի միջնորդութեամբ—գրում է «Արևելքը»—Լազարեան ճեմարանի վարչութիւնը Կ. պոլսեցի երեք հայ աղքատ մանուկ ուղարկեց։

* * *

Հիւսիսային Անդլիայում խօլերայ երևեցաւ. բաւական զոհ է տանում։

* * *

Կովկասեան տեղական խմբիչքների աքցիզի մասին նոր սահմանուած օրէնքը՝ առաջիկայ սեպտ. 15-ից կ'սկսուի գործադրուել։

* * *

«Արևելքը» զարմացած է՝ թէ ինչողը ինչ խելքով և հաչուով արդեօք Կովկասի յայտնի հայ մանկավարժներին և դպրոցական գործոյն հմուտ անձանց թողած՝ ճեմարանի համար հրաւիրում է հ. Օրմանեանին, սրբ. Նարբէյին, վերջապէս անդամ Ձերմակեան վարդապետին։

* * *

Կովկասեան երկաթուղու վարչութիւնը—պատմ. նրան — առողջապահական այլ և այլ միջոցներ ու դեղեր է գործ դնում, որպէս զի Բաթում—Բաղու գծի վրայ երթևեկող ճանապարհորդները խօլերայից չը բռնուին։

* * *

Բագուայ նաւթը հարաւային Եւրոպային ևս մատչելի կացուցանելու համար, մտադրութիւն կայ նաւթը դէպի Գենուա բերնաւորել, ուր Սէն-Գատարի երկաթուղու կայարանում մի ամբար շինելով, կարելի լինի յետոյ այնտեղ ծախու հանել դէպի հիւսիսային Իտալիա, Շվեյցարիա և հարաւային Գերմանիա։

* * *

Ծերակոյտը վճռեց, որ քաղաքային խորհրդարանների իրաւասուները իրաւունք չունին քաղաքի գործերին վերաբերեալ կապալները վերցնելու։

* * *

Որքան էլ Լֆիմէրդէի վրայ ծիծաղողներ շատ կան, այնու ամենայնիւ նրա դուշակութիւնքը ճշդումեն։ Այսպէս՝ Լֆիմէրտէն օգոստոս ամսուայ համար օդերի հետեւեալ դուշակութիւնն է անում.

Յուլիսի 26-ից մինչև 2 օգոստոսի տաք եղանակ. երբեմն էլ անձրև։

Օգոստ. 2-ից մինչև 9-ը զովացուցիչ անձրևներ. 9-ից մինչև 16-ը պարզ եղանակ։

16-ից մինչև 24-ը—պարզ, բայց զով եղանակ. 24-ից մինչև 31-ը—նախ պարզ, յետոյ փոփոխական.

* * *

Պենզայի նահանգում, այս ամառ, 28,830 օրավար հողի ցանքսերն՝ կարկտահար եղան։

* * *

Պետերբուրգում «Մանկավարժական լրագիր» անունով մի նոր թերթ է դուրս գալու. Ծրագիրը հարուստ բովանդակութիւն ունի.

* * *

Ռուսաստանում մի ընկերութիւն է կազմուել, որ արուեստական կերպով սառոյց է պատրաստում։ Այդ սառոյցը թէ էժան է և թէ սառցատներում պահուած բնական սառոյցներից մաքուր.

* * *

«Դրօէբան» լսել է, որ վրաց երիտասարդութիւնը «պատմական և հնագիտական ընկերութիւն» է կազմելու։ Կանոնադրութիւնը խմբագրուած պրծած է.

Խմբագիր Պ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ.
Հրատարակիչ Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԲԱԳՐԱՏ ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄԸ

Եօթն տարեկան հասակի երեխայոց ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ և ՔՆՆՈՒԹԻՒՆԸ սկսուելու են ներկայ տարուայ օգոստոսի 27-ին, իսկ ՈՒՍՈՒՄԸ սեպտ. մէկին։ Ուսումնարանի կանոնադրութիւնը ցանկացողները կարող են ձրի ստանալ ուսումնարանից։ Ուսումնարանը գտնվում է Վելեամինովսկի փողոցի վերայ իշխան Ամատունու տանը № 11.

Մամուլի տակից դուրս եկաւ.

«ՍԲԱՐՈՂՈՒԹԻՒՆ և ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԽՈՐՀՐԴՈՅ ՍԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅՑ».

Երկասիրութիւն Արսէն քահ. Բագրատունեաց.

Ծախվում է բոլոր գրավաճառների մօտ և Ե. Ծատուրեանցի լոմպայի խանութում. գինն է 50 կ.։ Նոյն տեղերում ծախվում են վերոյիշեալ հեղինակի և երկու աշխատութիւններն, այն է՝ «ՏԱՍՆ ՊԱՏԳԱՄՔ» գինն է 25 կ. և «ՎԵՐՋԻՆ ՅՈՒՇԻԿ». գինն է 30 շօպ.։

1—10

Քաղաքային Վարչութիւնը ցանկանում է Վ. ԵՐԱՅԻ և ՀԱՒԱՐԱՐԻ քաղաքային տարրական ԴՊՐՈՑՆԵՐԻ համար ՏՆԵՐ վարձել առաջնի համար մի մեծ դահլեճ 50 աշակերտների համար, մի նախասենեակով և երկու սենեակով ուսուցչի համար, իւր խոհանոցով, Օլգինսկի փողոցի կամ Նորա մօտերում, իսկ երկրորդի համար երկու դորա չափ բնակարան. հրաւիրում է ցանկացողներին տալ իրենց տուները, դիմել քաղաքային վարչութեանը։

1—1

Շամախւոյ ս. Յանդխտեան օրիորդական դպրոցի համար հարկաւոր է ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ և ՄԻ ՎԱԺԱՊԵՏ (այր ու կին), տարեկան 600 ռուբլի ռոճիկով և բնակարան։ Դպրոցն ունի երկու դասատուն չորս տարուայ դասընթացով և բոլոր առարկաները յանձնուած է լինելու այդ երկուսին։ Դիմել — Шемаха. Попечительство Армянск. женскаго училища.

Քաղաքային Վարչութիւնը հասուցանում է ի գիտութիւն Թիֆլիսում թաց միրգ վաճառողներին և պարտիզի տէրերին, որ նա ԹԱԿ ՊՏՈՒՂՆԵՐԸ Թիֆլիս բերելը արգելելու համար կարգադրութիւններ է արել։ Այդ պատճառաւ հրաւիրվում են մրգավաճառները այդ տեսակ խակ պտուղներ չը գնել և չը ծախել, հակառակ դէպքում դրանք կը խլուին և կ'ոչնչացնուին։

3—2

Սրանով պարտք եմ համարում ՎԵՐՋԻՆ անգամ յայտնել այն պարոններին, որոնց մօտ գտնվում է իմ հրատարակած Պ. ՀԱՅԿՈՒՆՈՒ - ՐԱՖՖԻԻ ԿԱՅԾԵՐԸ վերնագրով գրքոյկի բաժանորդագրութիւնները, բարեհաճէն չուտով հասցնել ինձ, որպէս զի կարողանամ գրեանքը անմիջապէս ուղարկել ըստ պատկանելոյն։ Իմ հասցէն.-Баку. Сеяду Амирянцу.

ԷԺԱՆ ԳՆՈՎ

Ծախվում է ԱԲԱՍԻԲ, ԱՄԱՆՆԵՐ, ԾԱՂԻԿՆԵՐ. Աբսենալի փողոց. 24. դեղատան վրայ.

(2—2)

Ներսիսեան Հայոց Ազգային-Հոգեւոր դպրանոցում առաջիկայ 1884/5 ուսումնական տարում նոր ընդունուող ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ պարապմունք տեղ կայ միայն հետեւեալ դասատանց մէջ.—

Պատրաստականում՝ միջին բաժանման . . .	8
Վերին բաժանման. .	26
Հինգերորդում . . .	6
Եւ եօթներորդում. .	8

Մի հայ ընտանիք ցանկանում է առաջիկայ սեպտեմբերից ուսումնարանների ՄԱՆՈՒԿՆԵՐ կամ ՊԱՏՆԵՆԵՐ պահել։ Ցանկացողների հետ պարապում է հայ, ռուս և ֆրանսիացի լեզուներով. նոյնպէս և առարկաներով։ Պայմանները չափաւոր են։ Հարցնել «Մեղուի» խմբագրատանը։

Շուտով մամուլի տակից դուրս կը գայ նոր

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԳՐԱԲԱՐ ԼԵԶՈՒԻ ՀԱՅՈՑ

միջնակարգ դպրոցների համար, աշխատութիւն Հ. ԳՈՒԿԱՍԵԱՆՑ, հրատարակութեամբ «կենդրոնական գրավաճառանոցի»։ Կը ծախուի նոյն գրավաճառանոցում։

Նոյն տեղը ծախվում է մի և նոյն հեղինակի «ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» հին զարն երկրորդ մաքուր տպագրութեամբ։ Գինն է 80 կոպ.։ Գումարով գնողների համար զեջումն կը լինի։

7—10

ՀԱՅԿԱԿԱՆ

„ԳԵՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ“

Սեպտեմբերի վերջին լոյս կը տեսնի կենդրոնական գրավաճառանոցի հրատարակութեամբ մեր «ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ» անունով դասատետրը հայոց դպրոցների համար. ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, հարստացրած և հիմնական փոփոխութիւնների ենթարկած։

Մ. ՏԷՐ-ՍԱՐԳՍԵԱՆՑ.

8—10

Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ «ԿՈՎԿԱՍԵԱՆ» ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ ՎԻԵՆՆԱՅԻՑ ՍՏԱՑՈՒԱԾ ՀԵՏԵՒԵԱԼ ԳՐԵՐԸ.

1) Տերվիշեան—Այրի մայրն ու մի մոր որդիակը գինն է 30 կոպէկ.—2) Ըստկարեան. Առաջնորդ նամակագրութեան գաղղերէն և հայերէն գինն. 2 ռուբլի.— 3) Առողջապահութիւնը պահպանելու վերայ օգտակար կանոններ. կրթական և զբօսալի տետրակներից № 1. գին. 45 կ. — 4) Արևելեան յիշատակագիրների նամակներէ քաղուած ազատ թարգմանութիւն. կրթական և զբօսանելի տետրակներից № 2. 70 կ.— 5) Թոռընեան. Արտաշեսեան Արտաւազդ, բանք և վախճանը. կրթական և զբօսանելի տետրակներից № 3. 70 կ.—6) Էմինեան. Երեքլեզուեան բառագիրք այսինքն գաղղերէն, հայերէն, տաճկերէն. ամուր կազմուած գին. 8 ռ. 50 կ.— 7) Զամանեան. բարոյական ընթերցուածներ. նորահաս անձանց և ծնողաց համար օգտակար խրատք և օրինակք. կիսալթ կազմով գին. 85 կ.— 8) Բարոյական թատրներ՝ Դրիզոր, կամ բարեսուութիւն 85 կ.— 9) Բարոյական թատրներ՝ Գեղամ ու Դրիզորիս կամ հայրենասէր որդիք—թղթակազմ 85 կ.— 10) Բարոյական վէպեր—Ռինոս գեղին ողողելը № ա. 70 կ. — Վէպեր — Ֆրանսիսկոս Սուաւէին բարոյական պատմութիւնները 70 կ.— 12) Բարոյական վէպեր — Աղաւնի կամ բարեբարութեան վարձքն ու չարութեան պատիժը 70 կ. — 13) Բարոյական վէպեր—Կիանդա, կամ որբերուն պաշտպանն Աստուած է գ. 70 կ.— 14) Բարոյական վէպեր—Մայրական սէր, կամ ձմերուան դժբաղդ զիշեր մը գ. 85 կ.— 15) Բարոյական վէպեր—Փերդինանդոս կամ խղճմտանքի զօրութիւնը գ. 70 կ.— 16) Նուրիձանեան փորձառական բնագիտութիւն կամ Ֆիզիկա, համառօտ օգերուաբանութեամբ գին. 4 ռուբլի։

1—3

ДОЗВОЛЕННО ЦЕНЗУРОЮ ТИФЛИСЪ, 11-го Августа 1884 г. Типограф. М. Рот. и К-о. На Гол. проспектѣ Домъ № 41.

Տպարան Մ. Ռոտինեանց և ընկ.